

# Քո ապաստանի հայցը

Տեղեկատվություն ապաստանի ընթացակարգի վերաբերյալ

## Ինչո՞ւ է տրվում այս բրոշյուրը

Դու ցանկանում ես ապաստան խնդրել Նիդերլանդներում: Ապաստան տալ՝ նշանակում է, այլ երկրում ապահովել այն մարդկանց անվտանգությունը, ովքեր իրենց սեփական երկրում չեն կարող անվտանգ և պաշտպանված ապրել:

Ապաստանի հայց ներկայացնելու համար պաշտոնապես դիմում են Նիդերլանդների ղեկավարությանը՝ բնակության կարգավիճակ ստանալու հարցով, որն էլ անհրաժեշտ է Նիդերլանդներում բնակվելու իրավունք ունենալու համար: Ապաստանի դիմումով սկսվում է ապաստանի ընթացակարգը, որը իրավական մի գործընթաց է, ըստ որի Նիդերլանդների ղեկավարությունը քննարկում է կացության կարգավիճակ տալու հարցը:

Այս բրոշյուրում դու կարող ես կարդալ այն մասին, թե ինչ է տեղի ունենում ապաստանի ընթացակարգի ժամանակ: Կարդալով այն կիմանաս նաև, թե ինչ պետք է անել (քո պարտականությունների մասին) և ինչ կարող ես ակնկալել Նիդերլանդների ղեկավարությունից (քո իրավունքների մասին):

## Ո՞վ կարող է պաշտպանություն (ապաստան) ստանալ Նիդերլանդներում

### Փախստականի բնակության կարգավիճակ

Նիդերլանդների ,Օտարերկրացիների մասին օրենքում գրված է այն մասին, թե երբ կարող ես դու փախստականի բնակության կարգավիճակ ստանալ: Դու կարող ես փախստականի կարգավիճակ ստանալ հետևյալ պայմանները բավարարելու դեպքում.

- Դու ունես սարսափի հիմնավոր պատճառներ քո երկրում ռասայի, կրոնի, ազգության, քաղաքական համոզմունքների պատճառով հետապնդվելու կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելության պատճառով:
- Դու ունես սարսափի հիմնավոր պատճառներ քո երկրում մահապատժի, խոշտանգման կամ այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի ենթարկվելու հարցերում:
- Դու ունես սարսափի հիմնավոր պատճառներ, քանի որ քո երկրում դու կամայական բռնության զոհ ես դարձել զինված ընդհարումների պատճառով:
- Քո կինը կամ ամուսինը, զույգդ, հայրդ կամ մայրդ վերջերս Նիդերլանդներում փախստականի կացության կարգավիճակ են ստացել:

Միգրացիայի և հպատակության ծառայությունը (IND) որոշում է, թե արդյոք դու բավարարում ես փախստականի կացության կարգավիճակ ստանալու պայմանները:

## Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքույկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում և պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե այն ըստ օրենքի պահանջվում է: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է նաև ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցելու ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե այդ կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են ուզում օգտագործել ձեր տվյալները;
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցելու դրանք:

Ցանկանում եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք մուտք գործել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքույկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները:

# Ի՞նչ կազմակերպությունների հետ ես դու առնչվելու



jeugdbescherming voor vluchtelingen

Երբ դու առանց ծնողների, որպես մի անչափահաս փախստական, եկել ես Նիդերլանդներ, նիդերլանդների օրենքի համաձայն դու պետք է ունենաս խնամակալ: Nidos կազմակերպությունը այն հաստատությունն է, որը զբաղվում է միայնակ անչափահաս օտարերկրացիների խնամակալների հարցով: Նրանք քո խնամակալության համար կներկայացնեն պաշտոնական մի հայտ: Այնուհետև **Nidos կազմակերպությունը** իր աշխատակիցներից մեկին կնշանակի որպես քո խնամակալի: Այդ աշխատակիցը քեզ կուղեկցի Նիդերլանդներում: Խնամակալը քեզ կօգնի ամենատարբեր՝ կարևոր որոշումներ կայացնելու հարցերում, հոգ տանելու դու բնակվելու պատշաճ տեղ ունենալու համար, լուծելու կրթություն ստանալուց հարցը և այլն: Խնամակալը կօգնի քեզ նաև քո ապաստանի ընթացակարգի ժամանակ, բայց խնամակալը ազդեցություն չունի IND-ի կայացրած որևէ որոշման վրա: Քո խնամակալի վերաբերյալ այլ տեղեկություններ կարող ես ստանալ Nidos-ից:



COA Centraal Orgaan opvang asielzoekers

**Փախստականների ընդունելության կենտրոնական մարմինը** (COA) հոգ է տանում Նիդերլանդներում փախստականների ընդունելության և այդ ընթացքում անհրաժեշտ առաջնորդության հարցերում: Եթե դու տասներեք տարեկանից փոքր ես, ապա ապաստանի ընթացակարգի ժամանակ ապրելու ես խնամակալական ընտանիքում: Իսկ եթե տասներեք տարեկան ես կամ ավելի մեծ, դու կլինես պատանիների համար նախատեսված COA-ի ընդունելության հաստի կացարանում կամ խնամակալ ընտանիքում: COA-ն հոգ է տանի, որպեսզի դու ունենաս կացարան, կերակուր և առողջության ապահովագրություն: Դու կարող ես նաև դիմել COA-ին, որպեսզի քեզ օգնեն որևէ բժշկի հետ հանդիպում կայացնելու համար: COA-ն մի անկախ կազմակերպություն է և կապված ապաստանի դիմումի հետ չի կայացնում որոշումներ:



**Ապաստան հայցողների առողջապահության բաժինը** (GZA) մի կազմակերպություն է, որին կարող եք դիմել հիվանդանալու դեպքում կամ առողջական ցանկացած հարցերով: Ապաստան հայցողների կենտրոնացման ցանկացած բաժնում (COA) կամ այդ բաժնի (COA) մոտ գործում է Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA): GZA բաժինը ձեր համար կարող է հանդիպումներ կայացնել որևէ բուժաշխատողի, բուժքրոջ, GZA բաժնի հերթապահ բուժօգնողի կամ տնային բժշկի հետ: Ցերեկվա կամ գիշերվա ցանկացած ժամերին դուք կարող եք զանգահարել առողջապահությանը վերաբերող հարցերով զբաղվող հերթապահ բաժին հետևյալ հեռախոսահամարով՝ 088 112 21 12: Առողջապահությանը վերաբերող հարցերով երկուշաբթի

օրվանից մինչև ուրբաթ կարող եք զանգահարել նշված հեռախոսահամարով, օրինակ. եթե կարիք ունեք ստանալ ուղեգիր որևէ բժշկի/ բուժմաշխատողի դիմելու համար:



**Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնը** մարդու իրավունքների մի անկախ կազմակերպություն է, որը հիմնադրված է փախստականների շահերը պաշտպանելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը քեզ տեղեկություններ կտա և կբացատրի ապաստանի գործընթացի մասին: Փախստականների աջակցության կենտրոնը տեղեկացնում է և օժանդակում անհատի ընթացակարգի ժամանակ և միջնորդում այլ կազմակերպությունների հետ խնդիրներ ունենալու դեպքում: Այն սերտ համագործակցում է փաստաբանների հետ: Փախստականների աջակցության կենտրոնը ապաստանի դիմումի վերաբերյալ որոշումներ չի կայացնում:

## Raad voor Rechtsbijstand legal aid

**Իրավաբանների պալատը** հոգ է տանում փաստաբանի տրամադրելու հարցում, եթե ինքը նրանց վճարը չես կարող հոգալ: Իրավաբանների պալատը կվարձատրի քո փաստաբանին՝ նրա ցուցաբերած իրավաբանական օգնության համար: Փաստաբանը չի ծառայում Իրավաբանների պալատին: Փաստաբանը մի անկախ իրավական խորհրդատու է, որը կաջակցի քո ապաստանի ողջ ընթացակարգում:



Immigratie- en Naturalisatiedienst  
Ministerie van Veiligheid en Justitie

**Ներգաղթի և քաղաքացիության ծառայությունը** (IND) Նիդերլանդների Անվտանգության և արդարադատության նախարարության բաժիններից մեկն է: IND-ի աշխատակիցները վարում են գրույցներ փախստականի ինքնության, ազգության, ճանապարհի և իր երկրից մեկնելու պատճառների վերաբերյալ: Նրանք քննում են փախստականի անձին վերաբերող կյանքի պատմությունը և նրա երկրի իրավիճակը: Դրանից հետո նրանք որոշում են փախստականի (ժամանակավորապես) մնալ, չմնալը Նիդերլանդներում կամ նրա՝ իր երկիր վերադառնալու հարցը:



IND-ի մասնաշենքերում և COA-ի ընդունելության կենտրոններում կան **հսկիչներ**: Դու նրանց կճանաչես իրենց համազգեստից: Նրանց ներկայությունը քո անվտանգության համար է: Դու կարող ես նաև նրանց հարցեր տալ այն մասին, թե IND-ի և COA-ի մասնաշենքերում ու տարածքներում ինչն է թույլատրվում և ինչը՝ ոչ: Այս հսկիչները ազդեցություն չունեն ապաստանի դիմումի որոշման վրա:



Dienst Terugkeer en Vertrek  
Ministerie van Veiligheid en Justitie

**Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V)**

Նիդերլանդների Անվտանգության և արդարադատության նախարարության բաժանմունքներից մեկն է: Երբ դու կացության կարգավիճակ չես ստանում, DT&V-ի աշխատակիցն օգնում է քեզ կազմակերպել քո վերադարձը դեպի հայրենիք:



**Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM)**

մի անկախ կազմակերպություն է, որն աջակցում է աշխարհի գաղթականներին: IOM-ը կարող է օգնել, երբ դու ցանկանաս ինքնուրույն լքել Նիդերլանդները: IOM-ը տալիս է գործնական տեղեկություններ վերադարձի ու վերինտեգրման վերաբերյալ և ուղեկցում՝ Նիդերլանդներից մեկնումը կարգավորելու դեպքում: Այս հարցում օգնություն ստանալու համար կարող ես դիմել խնամակալիդ, Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակցին կամ քո փաստաբանին:

**Ի՞նչ է ակնկալվում քեզինից**

Ապաստանի ընթացակարգի ժամանակ կարևոր է տալ տեղեկություններ ապաստանի հայցի պատճառները հիմնավորելու համար: Քեզինից ակնկալվում է նաև, որ ապացույցի բոլոր միջոցները, որոնք դու ունես կամ կարող ես ձեռք բերել (ինչպես օրինակ՝ քո փաստաթղթերը կամ նամակներ, որոնք կհիմնավորեն քո պատմածը), ներկայացնել IND-ին:

Օրն է բան է պատահելու դեպքում շատ խելացի կլինի, ինչպես նաև կարևոր է, որ այդ մասին հնարավորին չափ շտապ տեղեկացնել IND-ին: Այդ դեպքում IND-ն կփորձի հնարավորին չափ օգնություն ցուցաբերել, որպեսզի կարողանաս շարունակել ապաստանի ընթացակարգը:

**Ապաստանի ընթացակարգը օր առ օր**

IND-ի կողմից նշանակված հարցազրույցի օրը ներկայանալու ես IND-ի գրասենյակ, և այդ օրվանից էլ կսկսվի է քո ապաստանի ընթացակարգը:

Ստորև նշված է ամեն ինչ ապաստանի ընթացակարգի մասին օր առ օր:

**Օր 1. առաջին հարցազրույց**

IND-ի աշխատակցը քեզ հետ պաշտոնական հարցազրույց կվարի քո ինքնության, ազգության և ճանապարհի վերաբերյալ: Այս զրույցի ընթացքում IND-ի աշխատակցը հարցեր կտա նաև քո ծնողների կամ այն մարդկանց մասին, ովքեր քեզ համար հոգ են տարել մինչև Նիդերլանդներ գալը: Այս զրույցը կոչվում է առաջին հարցազրույց: Եթե դու ցանկանում ես, կարող ես խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին կամ քո խնամակալին ներկա գտնվելու առաջին հարցազրույցի ժամանակ:

Այս զրույցի ժամանակ հարցեր չեն տրվի քո ապաստանի հայցի պատճառների վերաբերյալ: Այն տեղի կունենա IND-ի աշխատակցի հետ մեկ այլ հարցազրույցի ժամանակ (տես՝ օր 3): IND-ի աշխատակիցը քեզ շատ մանրակրկիտ հարցեր կտա ամեն ինչ էլ ավելի լավ հասկանալու համար, այն մասին թե դու ով ես, որտեղից ես եկել և ինչպես ես հասել Նիդերլանդներ: Քեզ հարցեր տալու միջոցով IND-ի աշխատակիցը միաժամանակ կստուգի, թե արդյոք դու ճշմարտության մասին ես պատմում, թե ոչ: Որքան հնարավոր է լավ պատրաստվիր այս հարցազրույցին: Դու մեկ անգամ ես հնարավորություն ստանում հասկանալի և լիարժեք կերպով պատմելու քո մասին: Միշտ ասա քո իսկական տվյալները, քո ծննդյան իսկական տարեթիվը, ամիսը ամսաթիվը և ոչ թե կեղծ (ճամփորդական) փաստաթղթերում նշված տվյալները: Եթե կեղծանում ես գործածում, ապա դա նույնպես հայտնի: Սա կարևոր է, քանի որ ստուգվելու է քո փաստաթղթերի և պատմության իսկությունը: Եթե IND-ն պարզի, որ քո պատմությունը ճիշտ չէ, և քո փաստաթղթերն իսկական չեն, ապա դա կարող է բացասաբար ազդել քո բնակության իրավունքի կարգավիճակի համար:

IND-ի հետ հարցազրույցների ժամանակ ներկա է գտնվում թարգմանիչ: IND-ի աշխատակիցը հարցերը տալիս հոլանդերեն: Թարգմանիչն այն թարգմանում է քեզ համար հասկանալի լեզվով: Թարգմանիչը թարգմանում է նաև քո պատասխանները հոլանդերեն: Թարգմանիչն անկախ է և քո ապաստանի հայցի որոշման վրա ազդեցություն չունի: Եթե դու և թարգմանիչն իրար լավ չկարողանաք հասկանալ, ապա տեղեկացրու այդ մասին: Այդ ժամանակ IND-ի կողմից մեկ այլ թարգմանիչ կնշանակվի: Կարևոր է, որ թյուրիմաց տեղեկություններ չգրանցվեն՝ հարցերը լավ չհասկանալու պատճառով:

Առաջին հարցազրույցի զեկուցագիրը դու կստանաս քո փաստաբանի միջոցով:

**Օր 2. Լայնածավալ հարցազրույցի նախապատրաստում**  
Քո փաստաբանը քեզ հետ կքննարկի առաջին հարցազրույցի զեկուցագիրը: Փաստաբանը աշխատասենյակ ունի IND-ի գրասենյակում: Այս հարցազրույցի ընթացքում թարգմանիչն օգնում է թարգմանելու այն ամենն, ինչ կասեք դուք ձեր փաստաբանին կամ զեկուցագրում որևէ բան բացակայում է կամ ճիշտ գրի առնված չէ, ապա քո փաստաբանը այդ մասին նամակով հայտնում է IND-ին: Քո փաստաբանը քեզ նախապատրաստում է IND-ի հետ կայանալիք երկրորդ հարցազրույցին:

**Օր 3. մանրագնին հարցազրույց**  
IND-ի աշխատակցի հետ երկրորդ գրույցը կոչվում է մանրագնին հարցազրույց : Այս գրույցի ժամանակ դու կարող ես պատմել ապաստանի դիմումի քո պատճառների մասին: Այս հարցազրույցը նույնպես տեղի կունենա IND-ի գրասենյակում: Կարևոր է, որ դու ամեն ինչ պատմես, որպեսզի IND-ն ճիշտ հասկանա, որ դու պաշտպանության կարիք ունես: Եղիր անկեղծ, ներկայացրու լիարժեք և հասկանալի կերպով, թե ինչ է քեզ հետ կատարվել, և ինչու չես կարող պաշտպանություն գտնել քո երկրում: Եթե որևէ իրադարձություն դու հստակ չես կարողանում մտաբերել, ապա հայտնիի այդ մասին IND-ի աշխատակցին: IND-ի աշխատակիցը տեղյակ է քո երկրի ընդհանուր իրավիճակին: Կարևոր է, որ դու պատմես քո սեփական դրության մասին, թե ինչու անձամբ դու ունես պաշտպանության կարիք: Պատմիր, որքան հնարավոր է տեղին մանրամասներով: Փոքր բաները նույնպես կարող են շատ կարևոր լինել: IND-ի աշխատակիցը դրանց վերաբերյալ նույնպես հարցեր կտա:

Եթե դու սպիներ ունես, ֆիզիկական կամ հոգեկան գանգատներ, որոնք կապ ունեն այն բանի հետ, ինչ տեղի է ունեցել քո երկրում, կարևոր է, որ այդ մասին ասես IND-ի աշխատակցին: Այդ ժամանակ IND-ն կարող է որոշում կայացնել քեզ հատուկ (բժշկական) հետազոտություն առաջարկելու համար՝ եթե IND-ն դա էական համարի ապաստանի դիմումի հարցում: Դու կարող ես նման հետազոտություն կատարել նաև քո սեփական նախաձեռնությամբ և սեփական ծախսերով: Քո փաստաբանը այս հարցում կարող է քեզ օգնել:

Կարևոր է, որ դու այդ հարցազրույցի ժամանակ նաև հասկանալի կերպով պատմես, թե ով է կարողացել կամ չի կարողացել քեզ հոգ տանել այն երկրում, որտեղից որ եկել ես կամ որտեղ որ ապրել ես նախկինում: IND-ի աշխատակցին բացատրիր նաև քո ունեցած ցանկացած կարծիքի մասին: Այս հարցազրույցի ժամանակ նույնպես ներկա կլինի թարգմանիչ:

Քո փաստաբանը և քո խնամակալը համարյա միշտ ներկա են լինելու քո հարցազրույցներին: Դու իրավունք ունես նրանց փոխարեն քեզ հետ տանելու ուրիշ մեկին: Դու կարող ես նաև

խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին, որպեսզի նրա աշխատակիցը հարցազրույցի ժամանակ ներկա գտնվի: Դու (փաստաբանիդ միջոցով) կստանաս քո հարցազրույցի զեկուցագիրը:

**Օր 4. Լայնածավալ հարցազրույցի քննարկում**  
Քո փաստաբանը քեզ հետ կքննարկի լայնածավալ հարցազրույցի զեկուցագիրը: Այս գրույցի ժամանակ նույնպես թարգմանիչն կթարգմանի այն ամենն, ինչ կխոսես փաստաբանիդ հետ միասին: Երբ զեկուցագրում որևէ բան բացակայի է կամ ճիշտ չի գրանցված չլինի, ապա քո փաստաբանը այդ մասին նամակով կհայտնի IND-ին:

**Օր 5. Նախնական որոշում**  
IND-ն կքննարկի, թե արդյոք դու բավարարում ես փախստականի բնակության իրավունքի պայմաններին: Այդ քննարկման արդյունքը որոշում է, թե հետագայում ինչպես կշարունակվի քո ապաստանի ընթացակարգը: Կան երեք հնարավորություններ.

1. Դու բավարարում ես փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դու ստանում ես (փաստաբանի միջոցով) IND-ից նամակ (վճիռ), որում նշվում է, որ քո ապաստանի դիմումը բավարար է: Դու իրավունք ունես (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Քո փաստաբանը կբացատրի, թե ինչ հետևանքներ ունի այն քեզ համար:
2. IND-ին շատ ժամանակ է հարկավոր ապաստանի հայցի քննարկման համար, դրա համար էլ նրանք չեն կարող ութ օրվա ընթացքում որոշում կայացնել ներկայցված ապաստանի դիմումի պատասխանը տալու համար: IND-ն կշարունակի քննարկել քո ապաստանի հայցը երկարացված ընթացակարգում և հայցի վերաբերյալ որոշումը կկայացվի ավելի ուշ: Դու կստանաս մեկ այլ բրոշյուր՝ ապաստանի երկարացված ընթացակարգի մասին:
3. IND-ն որոշում կկայացնի, որ դու չես բավարարում փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դու (փաստաբանի միջոցով) IND-ից կստանաս նամակ, որում նշված կլինի այն, որ IND-ն պատրաստվում է (այսինքն մտադիր է) մերժել քո ապաստանի դիմումը, որում գրվում են նաև նախնական մերժման պատճառները, և թե ինչ հետևանքներ կունենա այն քեզ համար: Քո փաստաբանը քեզ հետ կքննարկի այդ նամակը:

**Օր 6. կարծիք**  
Եթե IND-ն պատրաստվում է քո ապաստանի դիմումը մերժել, ապա այդ մասին կքննարկես փաստաբանի հետ: Այնուհետև քո փաստաբանը կարող է IND-ին գրավոր ուղարկել իր արձագանքը: Սա մի նամակ է, որով դու պաշտոնապես արձագանքում ես IND-ի նախնական որոշման դեմ և հայտնում ես, թե ինչու դու համաձայն չես դրա հետ:

## Օր 7 և 8. Որոշում

Քո տված պատասխանը ( կարծիքը) կարդալուց հետո IND-ն կ քննարկի արդյոք իր նախնական որոշումը պետք է փոփոխել, թե ոչ: Այդ պատասխանը արդյունքը վերջնական չ է, այն մասին, թե ինչպես կշարունակվի քո ապաստանի ընթացակարգը: IND-ն նամակով կհայտնի քո փաստաբանին իր կայացրած որոշումը: Քո փաստաբանը կբացատրի, թե այդ որոշումն իրենից ինչ է ներկայացնում: Կա չորս հնարավորություն.

1. Քո արձագանքն ( կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն գտնում է, որ դու, այնուամենայնիվ, բավարարում ես փախստականի կարգավիճակի պայմանները: Դու ստանում ես (փաստաբանի միջոցով) IND-ից մի նամակ (վճիռ), որում գրված է, որ քո ապաստանի դիմումը ընդունված է: Դու իրավունք ունես (ժամանակավորապես) բնակվել Նիդերլանդներում: Քո փաստաբանը կ բացատրի, թե այդ ամենն ինչ է նշանակում:
2. IND-ին ավելի շատ ժամանակ է հարկավոր գործը քննարկելու համար, և որ իրենք չեն կարող ութ օրվա ընթացքում որոշում կայացնել ապաստանի դիմումի պատասխանը տալու համար: IND-ն կշարունակի քննարկել քո ապաստանի հայցը երկարացված ընթացակարգում: Դու կստանաս մեկ այլ բրոշյուր՝ ապաստանի երկարացված ընթացակարգի մասին:
3. IND-ն կարող է պատասխանել, որ դու չես բավարարում ապաստան հայցողի պայմանի կետերին: Դու IND-ից կստանաս մի նամակ (փաստաբանի միջոցով / վճիռ), որում գրված կլինի , որ քո ապաստանի դիմումը մերժվել է: Այդ նամակում գրված կլինի նաև մերժման պատճառները և թե ինչ հետևանքներ կունենա այն քեզ համար: Քո փաստաբանը քեզ հետ կքննարկի այդ նամակը:
4. IND-ն կփոխանցի քո գործը Փախստականների աջակցության կենտրոն: Նրանք կանցկացնեն վերադարձին վերաբերյալ գրույցներ, ինչպես նաև կխոսեն այն մասին թե ով կկարողանա է քեզ համար հոգ տանել այն երկրում, որտեղից որ եկել ես կամ որտեղ որ նախկինում ապրել ես: Եթե դու համազործակցես այդ գրույցներին և քննարկումներին և եթե Փախստականների աջակցության կենտրոնը գտնի, որ դու չես կարող վերադառնալ քո երկիր, ապա այդ դեպքում Փախստականների աջակցության կենտրոնն այդ մասին կհայտնի IND-ին: Այնուհետև IND-ն կիրավորի, որպեսզի դու բնակության կարգավիճակի դիմում ներկայացնես՝ համաձայն միայնակ անչափահասների , Անելանելիության/Buiten schuldt կանոնակարգի:

## Քո դիմումը հետ վերցնելը

Ցանկացած պահի դու կարող ես քո դիմումը ետ վերցնել: Այդ դեպքում ճիշտ կլինի, եթե կապ հաստատես որևէ փաստաբանի հետ կամ անմիջապես դիմես IND-ին: Եթե դու ետ վերցնես քո դիմումը, ապա, որպես դրա հետևանք, այլևս չես կարող բնակվել Նիդերլանդներում՝ իհարկե, բնակության իրավունք այլ հիմքերի վրա չունենալու դեպքում: Ապաստանի հայցից

հրաժարվելու դեպքում մեկ ուրիշ պատճառով դուք չեք կարող մնալ Նիդերլանդներում: Այդ դեպքում դուք պետք է վերադառնաք ձեր ծագման երկիր: Մինչև ձեր վերադարձի օրը դուք պետք է մնաք ապաստանի որևէ կենտրոնում: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում էլ հնարավորություն ունեք նորից դիմել ապաստան ստանալու համար:

## Ապաստանի ընթացակարգից հետո

Եթե IND-ն բավարարում է քո ապաստանի հայցը, ապա դու իրավունք ես ստանում (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Դու ստանում ես բնակության կարգավիճակ: Եթե դու չափահաս ես, ապա կարող ես նաև աշխատել և ինքը բնակարան փնտրել: COA-ն կարող է քեզ օգնել բնակարան փնտրելիս: Մինչ քո առանձին բնակարան ունենալը դու իրավունք ունես բնակվել COA-ի հատկացրած կացարանում: Բնակության կարգավիճակ ստանալուց հետո IND-ն քեզ կտեղեկացնի քո իրավունքների և պարտականությունների: մասին: Քո խնամակալը և Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցները կարող են քեզ օգնել գտնելու տարբեր բաժիններ դիմելու հարցում, այսպես օրինակ՝ բնակարան, կրթություն կամ աշխատանք գտնելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը քեզ կարող է նաև օգնել՝ ընտանիքի անդամներին Նիդերլանդներ բերելու հարցում:

Եթե IND-ն մերժի քո ապաստանի դիմումը, ապա դու կարող ես քո փաստաբանի հետ խորհրդակցելով հետո բողոքարկել Նիդերլանդների դատարանում: Դա նշանակում է, որ դու պաշտոնապես կդիմես դատավորին, որ դու համամիտ չես IND-ի որոշման հետ: Դու կարող ես հայց ներկայացնել դատարանին՝ խնդրելով թույլտվություն այդ բողոքարկման ժամանակահատվածում Նիդերլանդներում մնալու համար: Այս հարցում քեզ կօգնի քո փաստաբանը: Այնուհետև դատավորը կքննի, թե արդյոք IND-ն ճիշտ է կիրառել Նիդերլանդների օրենքը քո ներկայացրած ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելիս: Դու հիմնականում իրավունք ունես դատավորի վճիռն սպասել Նիդերլանդներում:

Եթե IND-ն մերժի քո ապաստանի դիմումը և դու բողոքով չդիմես դատարանին, ապա քեզ կտրվի 28 օր ժամանակ Նիդերլանդները լքելու համար: Դու ինքը ես պատասխանատու քո երկիր վերադառնալու հարցում: Եթե տրված ժամկետում դու ինքնուրույն չմեկնես, ապա քեզ ստիպողաբար կվերադարձնեն քո երկիր: Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V) կօգնի քեզ քո մեկնումը կազմակերպելու հարցում: Մինչև ձեր վերադարձի իրականացման օրը դու կարող ես ապրել ապաստանի որևէ կենտրոնում:

IND-ի կողմից քո ապաստանի դիմումը մերժվելու դեպքում դու կստանաս մեկ այլ բրոշյուր՝ քո երկիր վերադառնալու մասին տեղեկություններով: Եթե դու ինքնակամ ես ցանկանում

վերադառնալ քո երկիր, ապա կարող ես կապ հաստատել Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ (IOM): IOM-ը կարող է քեզ գործնական տեղեկություններ տրամադրել և աջակցել մեկնման հարցում: Հաճախ IOM-ն ունենում է ընդունելության ժամեր փախստականների կենտրոններում: Դու կարող ես IOM-ի աշխատակիցներից մեկի հետ հանդիպում նշանակել նաև տարբեր քաղաքներում: Ապաստանի ընթացակարգի ավարտից հետո նույնպես կարող ես դիմել Փախստականների աջակցության կենտրոնին աջակցություն և տեղեկատվություններ ստանալու համար:

## Անելանելիության կարգավիճակ

### Բնակության սովորական կարգավիճակ

Միայնակ անչափահաս փախստականների համար գործում է հատուկ կանոնակարգ: Եթե պարզվի, որ դու քո ապաստանի դիմում ներկայացնելուց հետո երեք տարիների ընթացքում չես կարողացել վերադառնալ քո երկիր, մինչդեռ դու այդ բանում ինքդ ոչինչ անել չես կարող, ապա դու կարող ես ստանալ բնակության մի հատուկ կարգավիճակ, որն անվանվում է անելանելի դրության մեջ գտնվելու կարգավիճակ, որի համար պետք է բավարարել մի քանի պայմաններ.

- Քո ապաստանի հայցը մերժվել է:
- Քո առաջին գրանցման ժամանակ դու եղել ես 15 տարեկանից փոքր:
- Եթե դու 18 տարեկանից փոքր ես և ամուսնացած չես:
- Դու միայնակ ես Նիդերլանդներում, այսինքն՝ ծնողներիդ հետ չես կամ մեկ այլ երկրում չունես խնամակալ:
- Գոյություն չունեն անձիք կամ հաստատություններ, ովքեր/որոնք կարող են քեզ հոգալ այն երկրում, որտեղից որ եկել ես կամ որտեղ նախկինում ապրել ես:
- Դու (ինքդ, կամ քո խնամակալի և կամ այլ չափահասի հետ) նախկինում համագործակցել ես վերադարձը կազմակերպելու հարցում:
- Դու (ոչ քո մեղքով) չես կարող վերադառնալ այն երկիր, որտեղից եկել ես, կամ մեկ այլ երկիր, որտեղ դու նախկինում բնակվել ես:

Հնարավոր է նաև, որ նախքան քո ապաստանի դիմումը ներկայացնելու երեք տարին լրանալը պարզվի, որ դու բավարարում ես այդ պայմանները:

Եթե դու նույնիսկ տասնհինգ տարեկանից ավելի մեծ ես եղել, երբ Նիդերլանդներում ներկայացրել ես ապաստանի դիմում, ապա դու կարող ես անելանելի վիճակի պատճառով բնակության կարգավիճակ ստանալ: Դա այն դեպքում, երբ դու IND-ին լիարժեք հասկանալի կդարձնես, որ դու իսկապես չես կարող վերադառնալ այն երկիր, որտեղից որ եկել ես: Պայմանները հետևյալն են.

- Քո երկրի կամ այն երկրի իշխանությունները, որտեղ դու նախկինում բնակվել ես, վերադարձիդ համար թույլտվություն չեն տալիս :

- Դու պատրաստակամություն ես ցուցաբերել իշխանությունների հետ համագործակցելու և անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր ստանալու համար:
- Դու չես կարող մեկնել առողջակական խնդիրների պատճառով:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND) կորոշի, թե դու արդյոք բավարարում ես բնակության կարգավիճակ ստանալու պայմանները՝ միայնակ անչափահաս փախստականների վերադարձի անճարակության հիմունքներից ելնելով:

## Բնակության կարգավիճակ մարդկանց թրաֆիքինգի դեպքում

Դու կարող ես որոշակի ժամկետով բնակության կարգավիճակ ստանալ, եթե դու մարդկանց թրաֆիքինգի գոհ ես դարձել: Սա ժամանակավոր կացության կարգավիճակ է: Այս դեպքում դու պետք է բավարարես հետևյալ պայմանները.

- Դու մարդկանց թրաֆիքինգի գոհ ես դարձել:
- Դու հայտնել ես այդ մասին ոստիկանությանը կամ այլ եղանակով օգնել ես քրեական հետաքննության հարցում՝ որոնելու կամ հետապնդելու քրեական հանցագործներին:
- Հարուցված է քրեական գործ կամ քրեական նախնական հետաքննություն կ կատարվի այն հանցանքի համար, որի մասին հայտ կներկայացվի ոստիկանություն կամ, որի շրջանակներում դու այս կամ այլ կերպ համագործակցություն կցուցաբերես:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND) կորոշի, թե դու արդյոք որպես թրաֆիքինգի գոհ բավարարում ես բնակության կարգավիճակ ստանալու պայմանները:

## Հաճախ տրվող հարցեր

### Երբ կկայանա իմ առաջին հարցազրույցը IND-ում

Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությանը դիմելուց հետո դու ամենաքիչը երեք շաբաթ ժամանակ կունենաս ապաստանի ընթացակարգին նախապատրաստվելու համար: Գործնականում ամենաքիչը երեք շաբաթ կտևի մինչև IND-ի կողմից կկայանա քո առաջին հարցազրույցը: COA-ի որևէ կացարանում կամ խնամակալ ընտանիքում կստանաս մի նամակ, որով IND-ն քեզ կիրավիրի առաջին հարցազրույցի:

### Որքան ժամանակ պետք է սպասել IND-ի որոշմանը

Ապաստանի ընթացակարգը տևում է ամենաքիչը ութ աշխատանքային օր: IND-ի գրասենյակները շաբաթ և կիրակի օրերին հիմնականում փակ են. դրանք աշխատանքային օրեր չեն: Երբեմն IND-ն չի կարող որոշում կայացնել ութ աշխատանքային օրվա ընթացքում, օրինակ՝ եթե դու այդ օրերին հիվանդանաս: Այդ դեպքում IND-ին կտրի վեց լրացուցիչ աշխատանքային օր՝ քո ապաստանի հայցի որոշումը կայացնելու համար:

Հնարավոր է նաև, որ IND-ն որոշի քո ապաստանի հայցը քննարկել ապաստանի երկարացված ընթացակարգում: Այդ դեպքում առավելագույնը վեց ամիս կտևի, սկսած քո ապաստանի դիմումի ստորագրման պահից, մինչև IND-ն կորոշի քո ապաստանի դիմումի պատասխանը: Այդ պարագայում դու կստանաս մեկ այլ բրոշյուր՝ ապաստանի երկարացված ընթացակարգի մասին տեղեկատվությամբ: Եթե IND-ն վեց ամսվա ընթացքում չկարողանա կայացնել որոշում, ապա դու այդ մասին լուր կստանաք IND-ից: Երբ IND-ն քո ապաստանի դիմումից հետո հաջորդ վեց ամիսների ընթացքում որոշում չկայացնի, և դու այդ մասին ոչ մի լուր չստանաս, ապա կարող ես նամակով IND-ից պահանջել երկու շաբաթվա ընթացքում կայացնել որոշում կապված ապաստանի դիմումի հետ: Այս հարցում քեզ կարող է օգնել քո փաստաբանը: Քո փաստաբանի ներկայացրած դիմումի հիման վրա դատավորը կարող է վճռել, թե IND-ն արդյոք պետք է տույժ վճարի լուրաբանչյուր օրվա համար՝ ապաստանի դիմումի որոշումը սահմանված ժամանակահատվածում չկայացնելու համար:

**Ես նախընտրում եմ իմ խնդիրների մասին պատմել կին աշխատակցի: Հնարավոր է դա**

Նիդերլանդների առօրյա կյանքում տարբերություն չկա տղամարդկանց կամ կանանց հետ առնչվելու հարցում: Նիդերլանդների հասարակության մեջ տղամարդկանց և կանանց իրավունքները հավասար են, որն էլ մենք ակնկալում ենք նաև քեզանից: Մակայն, եթե դու ցանկանում ես IND-ի կին աշխատակցի հետ խոսել քո ապաստանի դիմումի պատճառք ելնելով, ապա կարող ես այս մասին հայտնել առաջին հարցազրույցի (IND-ի) ժամանակ: Այդ դեպքում IND-ն կփորձի կին թարգմանիչ հրավիրել լայնածավալ հարցազրույցի (երկրորդ հարցազրույց) ժամանակ: Եթե դու նախընտրում ես քո պատմությունը պատմել տղամարդ աշխատակցի, ապա կարող ես նաև այդ մասին հայտնել առաջին գրույցի (IND-ի) ժամանակ: Այս դեպքում IND-ն կփորձի կարգավորել, լայնածավալ հարցազրույցի ժամանակ ներկա լինեն IND-ի տղամարդ աշխատակցի և տղամարդ թարգմանիչ:

**Ինչ պետք է անել հիվանդանալու դեպքում**

Եթե դու հիվանդ ես կամ հղի, առաջին մասին առաջ բուժաշխատողին՝ բժշկական խորհրդատվության համար կատարվող հետազոտման օրը (տե՛ս՝ Մինչ քո ապաստանի ընթացակարգի սկսվելը բրոշյուրը): Մա շատ կարևոր է հատկապես այն դեպքում, երբ դու այնպիսի վարակիչ հիվանդություն ունես (կամ կարծում ես, որ ունես), ինչպիսիք են օրինակ՝ թոքախտը, քոսը կամ հեպատիտ B-ն: Այն ամենը, ինչ դու պատմում ես բուժաշխատակցին, գաղտնի է պահվում: Բուժաշխատակցին առանց քո թույլտվության երբեք այլ անձանց քո առողջության մասին տեղեկություններ չի կարող տա:

Եթե դու հիվանդ ես ապաստանի ընթացակարգի ժամանակ, ապա այդ մասին առաջին խնամակալին, COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին: Նրանք կարող են օգնել քեզ ստանալու համապատասխան (բժշկական) օգնություն: Եթե դու հիվանդ ես IND-ի կամ քո փաստաբանի հետ նշանակված գրույցի օրը, ապա խնդրիր քո խնամակալին, COA-ի աշխատակիցներից մեկին տեղեկացնել այդ մասին քո փաստաբանին կամ IND-ին:

**Ինչ անել այս բրոշյուրը կարդալուց հետո հարցեր ունենալու դեպքում**

Դու կարող ես այդ հարցերը տալ քո խնամակալին, փաստաբանին կամ COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին:

**Ինչ անել բողոք ունենալու դեպքում**

Բողոք կազմակերպությունները, որոնք ներգրավված են ապաստանի ընթացակարգում, փորձում են աշխատել պրոֆեսիոնալ և հոգատար կերպով: Մակայն եթե դու գտնում ես, որ որևէ կազմակերպություն քո հանդեպ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա դու կարող ես բողոքել: Նման հարցում քեզ կարող գնել քո փաստաբանը կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը:

**Այս տեղեկատվությունը հետևյալ կազմակերպությունների միանական հրապարակումն է.**

Centraal Orgaan opvang asielzoekers | [www.coa.nl](http://www.coa.nl)  
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին  
Dienst Terugkeer en Vertrek | [www.dienstterugkeerenvertrek.nl](http://www.dienstterugkeerenvertrek.nl)  
Վերադարձի և մեկնման ծառայություն  
Immigratie- en Naturalisatiedienst | [www.ind.nl](http://www.ind.nl)  
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն  
Raad voor Rechtsbijstand | [www.rvr.org](http://www.rvr.org)  
Իրավական աջակցության խորհուրդ  
VluchtelingenWerk Nederland | [www.vluchtelingenwerk.nl](http://www.vluchtelingenwerk.nl)  
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid  
[www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl)  
Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հոլանդերեն տարբերակը: